Դալար սափեր, քաւոս անսառ
Քննուհ համբոյր մնում օղի,
Շողողուն լոյս, երազներ վառ—
Բուրմունք ծաղկանց եւ խոտի:

Հեփաքների աշխարհն է նոյս,
Շուրջն ամենը գոհ ու լի,
Շնչում, հնչում երկինքն ու հող.
Բլբուլն երգում հրաշալի:

Ես մենակ եմ. չունիմ ընկեր,
Խորք են ամենքն ինձ համար.
Ես մենակ եմ. որպէս սուներ
Շրջում անխօս ու մռայլ...

1897

* * *

Եւ իմ սիրք ես նետեցի
Ձրերի մէջ ալեկոծ.
Եւ ասացի՝ բոլ հալածուի
Հեռու ավեր, հեռու ծոց.

Սիրոյ շանքից անջատ, քափուն՝
Նա բոլ նիրհե անգարքնել
Կապոյս ջրի անյասակում՝
Հանգիստ ու լուռ, անսարքեր...

1907

* * *

Թեղին դողդողաց—քալկացաւ, քափուեց
 Նրա սաղարքը,
 Դունասուեց, ցնցուեց—ընկաւ հողի մեջ
 Պարսեզի վարդը.
 Տե՛ս, այլայլուեցին ու իրար անցան
 Աստերի հոյլեր.
 Ա՛ն, քայրսալով փշուր-փշուր եղան
 Հողի վրայ անսեր...

Մեն-մինաւորիկ ուռին ոսերը
 Խոնարհեց գետին.
 Եւ լռին լացեց—արսասու՛մները
 Հողը քջեցին.
 Թօշնած իմ սիրքը զարկուե՛ց... նա յաւէս
 Կարօս է յոյսի.
 Ո՛, սե՛րս, սե՛րս, կորուցի անհետ,
 Իսպառ կորուցի...

1896

I

Երբ սաղարքի մեջ սոխակը լսեց—
 Որ է՛լ այսեղ չես,
 Նա գեղգեղանքից յանկարծ դադարեց,
 Լուել է ինձ պէս:
 Երբ ծաղկանոցում ծաղիկներ տեսան—
 Անդարձ հեռացար,
 Էլ չբբուրեցին—մտքի մեջ ընկան՝
 Անխօս ու մռայլ:
 Եւ մեղմիկ զիւեր, երբ ձայնդ չառաւ
 Ոսուն շատուան,
 Հարհանդուն մարեց... անցաւ գետնի տակ...
 Կորա՛ւ յաւիտեան...

II

Ուզեցի մենակ, մենակ քափառել
 Աղօթել ու լալ,
 Ուզեցի այդպէս իմ վիշտը քաղել,
 Իմ վիշտը զուլալ.
 Ուզեցի արհիս յատակից պոկել
 Զայրուք եւ յուզմունք,
 Նրա խորքի մեջ ոչինչ չբողնել,
 Ո՛չ յոյս, ոչ զգացմունք...
 Եւ այդպէս աշխարհն առմիշտ անարգել
 Զբսիրել երբեք,
 Եւ հոգիս մարել, եւ սիրս խարել—
 Մոռացուի՛լ անհետս...
 Ուզեցի երբե՛ք, երբե՛ք չդառնալ
 Անհատ զգայուն.
 Ե՛ւ սրնջացի, ե՛ւ բողոքեցի
 Երկինք Աստծուն...

1896

I

Ես կառօս եմ քեզ
 Աղունճի՛կս հեզ.—
 Յիշո՞ւմ ես այգիին
 Գնացիմք միասին,
 Եւ քփերի մեջ
 Գզւում էի քեզ...
 Իսկ ձորի ափում,
 Աւեր պալատում,
 Ուր հայելազարդ
 Դահլիճն էր զուարթ —
 Մենք նստանք մօտիկ,
 Եւ քո գեղեցիկ
 Շրթունքների շունչ
 Զգացի լուռ-մունջ...
 Նոր վարդի նման
 Շողոտում էի
 Մասաղուքիցից,
 Եւ հեզ, առանց ձայն
 Վար էի գայում
 Անից, ամօրից...

II


Դարունս անցաւ,
 Օրերս անցել են,
 Մենակ եմ հիմա.
 Սիրսս լցուել է,
 Մարդիք փոխուել են,
 Ի՞նչ անեմ, ասա՛...
 Բայց դու ինձ մօտ չես,
 Ինձանից հեռու —
 Կառօսել եմ քեզ.
 Արի՛, նախշունի՛կ,
 Արի՛, սիրունիկ,
 Իմ յոյսը դու ես...
 Եթէ քեզնից էլ
 Հեռանամ, գնամ,
 Զատնին մեր օրեր.
 Իմ կեանքը տարամ,
 Օրերս խաւար —
 Կրմեունի՛մ անսեր...

* * *

Ա՛խ, կուգեի ցնորք լինել՝
 Տաք արեւի—նեւմակ յոյսի
 Եւ քո սիրքը տաքացնել—
 Լցնել սիրով՝ կեանքի, յոյսի...

Ա՛խ, կուգեի ցնորք լինել—
 Բիւրեղ-ցնորք—լուսաշաղախ,
 Երազիդ մեջ զարթեցնել՝
 Խլել, տանել նիրհոյ խաղաղ...

1902




Ո՛ր, երբ իմ կուրծքի միջից
 Բողբոջեին վարդ, շուշան—
 Եւ ցրանցից կրճիւսէի
 Մի ցնորաբոյր որորան.

Այնտեղ, չքնա՛ղ, դու հանգչեիր՝
 Երգ ասեի քեզ համար,
 Եւ բուրմունքից արբենալով՝
 Դու քնեիր հեզաբար.

Օրորեի կուրծքիս վրայ՝
 Անուշ քունըդ երկարեւ,
 Մինչ երկնքից իջնեւ սերը—
 Երկրի տանջանքը մարեւ...

Եւ ի՛մ կուրծքը երբ չորանար,
 Վարդն ու շուշան քոցնեին՝
 Դու զարթնեի՛ր, դու զարթնեի՛ր
 Աւազանի մեջ, իմ անգին...

1893 Աղեֆա.



* * *


Կուգեցայի ես քեզ համար
 Եղբայր լինել սիրելի,
 Կուրծքիդ վրայ գլուխս խոնարհ՝
 Քեզ հմայով լսեի.

Երազանքով անուշ—գարնան
 Ինձ պատկեր ասուածքներ՝
 Մոմունջները հայրենական,
 Գաղտնիքներն ու առասպել...

Լինելիք ինձ ընկերունի
 Աշխարհի մեջ ցնորքի,
 Եւ հոգեգմայլ՝ ես առյաւես
 Քո սրտի մեջ սուգունի...

Կուգեցայի ես քեզ համար
 Եղբայր լինել սիրելի...

1895 Ադէս.



* * *

Քո աչերը ծովի նման՝
 Սահման չունի—սակ չունի,
 Քո աչերն են գիշերանման՝
 Աստղոս գիշեր զարունի...

Դո՛ւ, իմ պսիկ արեւ-մանկիկ՝
 Շուշանաբո՛յր, երագո՛ւն,
 Սիրսս այնպէս մաղիկ-մաղիկ
 Սիրուդ կարօտն է քաշում...


1905

* * *

Իմ նազելի՛ վարդերբունք—
 Դու ոսկեղոյ մազերով,
 Մի սալուի՛ ես՝ բուրալի՛ խունկ—
 Ե՞րբ կըլինինք իրար քով.

Կարօտալա՛ն ես համբուրեմ
 Քո մազերը ոսկեղոյ,
 Եւ փայփայեմ, եւ՛ զուրգուրեմ
 Քո մազերը ոսկեղոյ...

1908 Բագու.




* * *

Այն, ո՞րտեղ են լոյս-շողերը—
 Լուսիկ-ծաղիկը լուսաւ,
 Այն, ո՞րտեղ են լոյս-հողերը,
 Վառ ջրերը, բորեաս...

Ես կուգեի սիրսս լցուեր
 Արեգակի ողջ լոյսը,
 Այդ լոյսի մեջ քո՛ղ սաւառներ
 Լուսանման շող-կոյսը...

Իմ լոյս-ծաղիկ, իմ լուսասր
 Դո՛ւ ես, սիրուն իմ Լուսի՛կ—
 Վառ ջրերը, բորեասը,
 Երազներս անուշիկ...

1907




* * *

Դու, նազելի՛ս, մի կոյս էիր
 Երազիս մեջ—մի կոյս սիրուն,
 Եւ երկնքի բոլոր աստղեր
 Քեզնով էին զմայլանում:

Դու, աչա՛գեղ, մի կոյս էիր
 Երազիս մեջ—լոյս շարմաղուն,
 Եւ դաշտերի բոլոր ծաղկունք
 Նազանքներով քեզ հետ խաղում:

Անո՛ւշ, դու մի որոր էիր
 Երազիս մեջ—ծովի վրայ,
 Անո՛ւշ, դու մի օրոր էիր
 Երազիս մեջ—գլխիս վրայ...

1907 Բագու.



* * *

Կարմիր վարդի՛կ, սիրունիկ,
Իրիկուն ե զովագին,
Քո կուրծքը բաց անուշիկ—
Յօղը իջնի քո կուրծքին:

Առաւօտուն արեւ գայ՝
Թերթիկներդ համբուրե,
—Յօղ-ակներով շողշողա՛,
Քննուե կուրծքդ քո՛ղ բուրե:

Կարմիր վարդի՛կ, սիրունիկ՝
Նրբ դու յինիս քականաւ—
Քամին կ'աւե քեզ «նանիկ»՝
Անուշ քնի՛ր քեզ համար:

1908 Քաղու.

Վ Ա Ր Դ Ը

Գարնան օրուայ առաւօտ՝
Յօղում եի միշտ նրան,
Նրդում եին նրա մօտ
Բլբուլները փաղցրաձայն:

Անուշ հովիկն եր ընկեր
Գիշերները իմ վարդին,
Իսկ ցերեկը արեւն եր
Շողում վարդիս երեսին...

Ա՛խ, չըզարկե չար քամին
Սիրուն վարդիս բուրալի,
Նա միակն ե պարտեզում—
Սիրուն վարդս բուրալի...

1909 Քաղու.


* * *

Վանդակի մեջ ես մեծացած
Թռչուն եի գարունին,
Դու քո ձեռքով ամեն անգամ
Փայվայեցիր մեղմագին:

Ազատքիւն եի խնդրում
Ես ամեն օր քեզանից,
Դու լսեցիր, ազա՛ս քոչուն—
Բացիր դուռը վանդակիս:

Բայց, ա՛խ, մի նոր վանդակի մեջ
Յայտնուեցի այս անգամ.
Օ՛, ազատի՛ր՝ ինձ կաշկանդեց
Քննու՛՛ւ սերդ կուսական:

1892 Ադէս.



* * *

Քո հոգու երկինքն է լուսամած՝
Հեզաբոյր, ե՛ւ մաքուր, ե՛ւ զուգուր,
Իսկ դու մի ծաղի՛կ ես հեզանագ—
Գեղանի, բուրալի եւ հուր-հուր.

Մազերդ, նազերդ երազո՛ւն...—
Ժպտում ես դու անմեղ, սիրունիկ,
Իմ սիրտը քեզ հետ է միշտ խօսում,
Իմ մեկիկ, իմ քննու՛ւ աղունիկ...

1911 Բագու.



* * *



Բուրեան, շափաղ
Վարդեր փռեմ
Հանապարհդ,
Սիրելի՛ս.—

Լուսաշաղաղ
Զարդեր հիւսեմ
Կուրծքիդ համար,
Նազելի՛ս.—

Դու ասղաշող,
Քաղցրամրմունջ
Գեղգեղումն ես
Երգերի.

Ծաղիկների—
Շողիկների—
Բոլլն, համբոյրը
Փարելի.—

Արշալոյսի
Ներշնչանով,
Երազելի
Կարօտով

Երգս եմ հիւսում
Երգս անարուեստ
Քո ծաղկաբոյր
Աշխարհում:

1908

I

Սո՛ւրն է կսրել
Իմ սիրք.
Թո՛ւրն է կսրել
Իմ սիրք.
— Սե՛րն է կսրել
Իմ սիրք...

Սրի կսրածը՝
Լա՛ւ է.
Թրի կսրածը՝
Յա՛ւ է—

Կըլաւանայ,
Դեղ կըլնի.

Սիրու կսրածը՝
Վա՛յ է,

Սիրու կսրածը՝
Մա՛հ է—

Զի լաւանայ,
Դեղ չի՛լնի...

II

Աղջի՛ ջան,
Աղջի՛ ջան,
Սիրսս ինչո՞ւ
Կսրեցիր,


Սիրսս ինչո՞ւ
Զարկեցիր,

Ինչո՞ւ սիրով
Կսրեցիր,

Ինչո՞ւ սրով
Զրգարկիր...

Աղջի՛ ջան,
Աղջի՛ ջան...

1896 Աղեփ.




Աղջի՛ ջան, սիրո՛ւն ջան--
Վարդ դառնամ՝

Քո կուրծքիդ, շրթունքիդ
Շողոողամ.

Աղջի՛ ջան, սիրո՛ւն ջան—
Հով դառնամ՝

Մազերուդ, ծամերուդ
Հես խաղամ.

Աղջի՛ ջան, սիրո՛ւն ջան—
Սեր դառնամ՝

Միտք մեզ, հոգուդ մեզ
Ծաղիկ սամ...

II

Սիրելիս սեր չունի՝
Սիրս ունի.

Միտք մեզ աշխարհը
Տեղ ունի.

Միտք մեզ աշխարհը
Սեր ունի.

Միտք մեզ մենակ ես
Տեղ չունիմ,

Մենակ ես աշխարհում
Սեր չունիմ...

1896 Աղեփ.

* * *

Իմ կանաչ կեանքը արի՛ւն է դարձել,
Իմ արեւ-սիրտը արի՛ւն է դարձել,
Աւան երկինք է իմ սիրտը հոգին.
— Իմ սիրտը-հոգին լեղի է դարձել...

«Աղբրանց արուն» ցողել եմ, փողել
Արփայ-արեւի զառ-վառ շողերով,
Ոսկե մազերդ փողել եմ, շաղել
Բուրալի կուրծքիդ մարմանդ հովերով...

Ա՛խ, կանաչ կեանքս դառն, արիւնլուայ,—
Արեւս չկա՛յ, արեւս չկա՛յ,
Դժոխք-գիշերը իմ հոգու վրայ—
Կանաչս չկա՛յ, սմբուլս չկա՛յ...

1904

* * *

Խժժո՛ւմ է Զանգին,
Զարկո՛ւմ է ֆարին—
Աղջի ջան, ո՞ւր ես.

Խժժո՛ւմ է Զանգին,
Վժժո՛ւմ է Զանգին—
Փափագում է ֆեզ.

Այգու խաղողը
Նագելի, կոկիկ—
Քո կուրծքի նման.

Զորափի դեղձը
Նաշխուն, խասուսիկ
Նրեսիդ նման.

Աղջի՛ ջան, ֆամին
Զարկում է ֆարին—
Զանգու ջրերին.

Սի՛րսքս է վառուել,
Ծառի—ֆարի մեջ
Տալիս եմ հովին...

Ի՛մ լոյս աղաւնի,
Քննո՛ւ՛՛ սիրելիս—
Ի՞նչպէս ձորն իջնեմ.

Ի՞նչպէս այգու մեջ
ձուրք վեր առնեմ,
Բերանս սանեմ.—

Ի՞նչպէս քաւ դեղձը
Պոկեմ ծառիցը—
Առնեմ, հոս ֆաշեմ...

Զե՞ որ, սար ու ձոր,
Ծաղկունքներ բոլոր
Ինձ կըյանդիմանեն.

Զե՞ որ, Զանգուն էլ
Զիլ կըփրփրայ,
Կ'ելնի ավերից.

Պեճեր կը հանե,
Պեճեր կըցրե
Իրեն ջրերից...

1901 Նրեւան.

I

Ոսկի երա՛գ ես—շափաղաւն լո՛յս ես—
Հրաչի՛կ բազե.

Երգչի սիրսքն ես—ալմաստի յոյս ես—
Դու ֆովրս վազե՛.

Ա՛յս, մութ է կեանքս—օրս է գիշեր
Առանց ֆեզ, հոգի՛ս,
Քա՛նց գիշերուայ լեռ՝ ֆոգս եմ ծածկել
Ու կուլայ հոգիս...

II

Երագես քոայ—անու՛՛՛ երագես.

— Ու դու չկայիր.

Քամին լուռ ու մունջ կ'անցնէր դռներես.

— Ո՞ւր է՝ քե գայիր.

Զուլալ աստերը՝ ֆանց ֆո աչերը՝
Կ'աշէին վրես.

Թաւուս ծառերը՝ ֆանց ֆո մագերը՝
Կուլային վրես,—

Ու ես որքի պէս աշխարհում մենակ՝
Կուզէի ֆեզի.

Մագերուդ ոսկին՝ կարօս ֆո խօսին—
Կուզէի ֆեզի...

1897 Աղէֆս.



- Աղջի՛ ջան, աղջի—կանաչ բուսի լինիմ՝
Դո՞ւ ինչ կրլինիս.
- Կանաչ բուսի լինիս—կարմիր վարդ կրլնիմ՝
Քո բուսիդ զուգեմ:
- Տղա՛յ ջան, տղայ—ես պարսեզ լինիմ՝
Դո՞ւ ինչ կրլինիս.
- Դու պարսեզ լինիս—ես բլբուլ կրլնիմ՝
Պարսեզդ խօսեմ:
- Աղջի՛ ջան, աղջի—ես ֆեզ սիրս լինիմ՝
Դո՞ւ ինչ կրլինիս.
- Դու ինձ սիրս լինիս—ես ֆեզ քեւ կրլնիմ՝
Իրար հետ քոնենմ:

1896 Աղեփս.

ՎԵՏԻ ՈՒՐՈՒԱԿԱՆՆԵՐ

I

Մայրի՛կ, խօսք ասա՛,
Քո խօսքը լսեմ,
Սիրովդ տաճանամ.

Մա՛յր իմ, ինձ վրայ
Ոլորտ ե նստեմ,
Փախիժը մահուան...

Այս, մա՛յր, խօսք ասա՛,
Որդիդ կեանք առնի,
Սրափուռի որդիդ.

Մայրիկ իմ, կուգե՛
Որդիդ սիրելի
Կայչի ես կուրծքիդ...

Բայց հեռու ես դու
Նազելի ծնո՛ղ,
Չար կեանքիս ընկեր.

Մտեր անարկու,
Մտեր ծուռտու
Հոգիս եմ ընկնել.

Մա՛յր իմ հեռաւոր,
Իմ անգին մայրիկ,
Գեթ ինձ աղօթիր.

Քո սուրբ աղօթքով,
Քո արտասուքով
Ցաւս փառասիր...

II

Դու սո՞ւն ես գնում,
Իմ բո՞ւնն ես գնում,
Կարողի՛ն ծնող.
 Իմ դո՞ւնն ես ծեծում,
 Դու գուր ես ծեծում,
 Հոգատար ծնո՛ղ...

Ա՛խ փակ է դուռս,
Ծալած իմ կուռս՝
Հեռու եմ սնից.
 Մայրիկ իմ, հայի՛ր,
 Չալքուի տունս
 Յորդ անձրեւներից...

Կրակս մարել,
Լոյս չի քափանձում
Իմ լուսամուտից.
 Ես ի՞նչ եմ դարձել
 Ծնո՛ղ սիրելի—
 Տանջանք ու կսկիծ...

Ասա՛ աղօթքներ,
Հեռանայ չարքը,
Հեռանան մեքեր.
 Դու բարի հրեշտակ,
 Դու քո կեանքի մեջ
 Բարի ես տեսել.

Ասա՛, սրժիս մեջ
Թեպե՛ս սեր զարթնի
Աշխարհի համար.
 Դառնամ քո գիրկը,
 Մարի չար կիրքը
 Եւ գտնեմ դադար...

* * *

Դուք ինձ քաղեցե՛ք
Իմ հորական սան
Բարդիների սակ.
 Ծմակների մեջ
 Սառն ե, անարեւ—
 Լուսքիւն է անսակ...

Թո՛ղ բարդիները՝
Իրենց քափքվում
Մազերով զանգուր՝
 Շիրիմս ծածկեն
 Ստուերների մեջ—
 Շեղան Տխուր...

Թող օր ու գիշեր
Քամիների հետ
Լան գլխիս վերեւ—
 Ասեն, որ կեանքի
 Տխուր օրերի
 Որդին եմ եղել...

Ասեն, որ մեռակ
Տառապանքներով
Տանջուել եմ յամառ.
 Ու չարչարուել եմ
 Խոր, անգուսպ հագով
 Աշխարհի քեզ համար...

Եւ ես մութ տեղում
Մենուքեան որդիս
Ննջեմ խոր քնով—
 Ու հանգստանամ
 Ծեր բարդիների
 Տխուր օրորով...

* * *

Եկայ հայրենիք...
Անհամբոյր դեմքեր
Մութ ամպերի պէս շուրջս կ'երեւան՝
 Լուռ ու անտաքեր...
Տունս քար ու քանդ,— ինչպէս անտաք,
Եւ բարդիներս խճճում են իսուր,
 Շրջում են անլուռ...
Զուարթ պառաւս այնտեղ չի շրջում,
 Տնկում, դուրսդուրում,
Գորովով լցուած— կորովով լցուած,
Որ գիրկն ընկնեն, որ քիչ շունչ փաշտ...
Շունս է դեմ վազում, ոտիս պլուլում,
 Համբուրում, զգում...
Եւ ես բնաւեր մի հաւքի նման,
Մենակ նիւղի պէս փամուց երեւման—
 Որպէս խորք սրդին
 Նայում եմ չորս դին,
Ասես անծանօթ
Եկուոր մի նամբորդ...
 Կեանքն ինձ համար
 Երազների շար,—
Անվերջ սանձանքի, անվերջ վշտերի
Մի անհասնելի աղբիւր մշտաբոխ...
Եւ հայրենիքում ես չունիմ անկիւն
 Գլուխս վար դնեմ...

1908

* * *

Վախ, մարել են,
Սրտս անցել
Կարմիր շողեր
Երազիս,—
Առաջույսի
Շափաղները,
Տենչանքները
Վառ յոյսի...

Վախ, չփայտան՝
Շողի նման,
Լոյսի նման
Ասդերի՝
Ոսկիաւար
Դրուագները,
Նուագները
Դրախտի...

1908

* * *

Վա՛խ, մահուան նման
Դունաս ե կեանքս,
Սառն ե իմ հոգին.

Ի՞նչ կայ ապագան,
Ի՞նչ ե պահամի
Ասում իմ մասին...

Ես հերոսաբար
Դեգերանքի մեջ
Կրսպասեմ նրան.

Թո՛ղ նա ինձ համար
Բերե՛ մի կեանք վառ
Կամ լուռ գերեզման...

1901

* * *

Ե՛կ արհա միջից հանե վարդեր,
Նրանք պե՛տ չեն ինձ.
Ե՛կ, հանե ու սար, նրանց վառ սերը
Թառամաւ նորից.
Մնացին դժգոյն, բալուկ բերրիկներ
Առանց բուրմունքի,
Մնացին նրանց լացող աչիկներ
Առանց հրապոյրի.
Եւ անապատում բիւրեղն ե փշուռել
Ոսկեռոյ յոյսիս,
Հանե՛ վարդերը—նոր-նոր կոխներ
Բարդուան նակասիս...

1890




Ո՛, լուռ գիշեր, դու ուժ դարձի՛ր,
Դու կոպերս վրայ բեր.
Դու քոյն դարձի՛ր, արիացի՛ր,
Քունն սուր, աչքերս վրայ բեր.

Կամ անխնայ դու հարբեցո՛ւր
Թուլիչ ուժով նեկսարի,
Ինձ թուլացո՛ւր, անգորացո՛ւր
Կամ քող հոգիս դադարի...

Անհանդուրժ ե սիրսս լիուն
Տառապանքին, յոյզերուն.
Ո՛, լուռ գիշեր, դու ուժ դարձի՛ր,
Դու կոպերս վրայ բեր...

1897




* * *

Ա՛խ, երագներս երե չփանան,
Իմ ծաղիկներն երե քաշամին,
Իմ անո՛ւրջ, իմ ա՛ստղ երե դալկանան,
Վառչիս քերթիկներ ցրիս. տայ փամին.

Դու այն ժամանակ իմ փոսք փռե,
Թարմ վարդեր շարե՝ իմ կուրծքի վրայ,
Չար բաղդը քող ինձ այնտեղ գլորե՛
Եւ սեւ ազդարը իմ գլխին դռայ...

1907




* * *

Բերե՛ք ինձ ծածկոց.
Վայրենի բնութեան
Սաղարքը բերե՛ք.
Արդէն հրապոյրքը
Եւ ծաղիկները
Մարելով անցան,
Մերկացաւ սիրսս...


Բերե՛ք ես ծածկեմ
Զարկուած, վիրաւոր
Սիրսս, յոյսերս.
Թօշնած ծաղիկս
Դժգոյն է անձայն
Եւ իմ ծաղկաւոր
Անցաւ երազս...

Ամպերի նման
Թափառ ու անսեր
Ես երեւում եմ
Ոլորտում անվերջ.
Ո՛ր, բերե՛ք բնութեան
Սաղարքն ու բուփեր՝
Ծածկուեմ նրանց մեջ...



* * *

Ծովը մլարոս
Շողերի կառօս...
Նա հազագներով,
Աղաղակներով
Զարկում է յամառ
Ափին առապար.—
Մլարի միջից
Խարկրուած արջից
Զարկում է, երգում
Եւ սիրք հեփում...
Խոռոհներ ափին
Լսում են շաշին,
Լսում անարգանք,
Որ չկան գրգանք,—
Արեւներ ծիծղուն,
Բարեւներ շողուն,
Յոյսեր ու սիգանք,
Յոյզեր ու բուխանք...
Եւ հազագներով,
Աղաղակներով
Երգում է քախսկոս,
Երգում երազկոս
Ծովը մլարոս
Շողերի կառօս...






Ունո՞ւմ է քամին դաշտ-անապատում,
Սեւ ու մուր գիշեր, սեւ ու մուր մեծեր,
Եւ ես գնում եմ մեծակ ու սրտում,—
Սիրս անապատ եւ սիրս գիշեր...

Ես ո՞ւր եմ գնում, ես ո՞ւր եմ փախչում,
Եւ ո՞ւր է ձգտում միտքս վեհ, ազատ,—
Հպարտ ճակատիս քամին է փակչում,
Ունո՞ւմ է, սուր՞ում դաշտում անապատ...

1904



* * *

Ման եմ գալիս
Դաշտի միջին
Մեծակ-մեծակ,

Ձեն տուի
Դարունքին
Ու եկաւ,

Յար սիրս՝
Ման եմ գալիս
Ձոր ու քարափ...

Իմ արտին
Ձեն տուի
Ու չեկաւ.

Կռուկներու
Ձենն եկաւ
Երկնքէն.

Դարունք
Սրիս մեջ
Ա՛յս, չեկաւ
Կռուկներ...

Անուշ ձենը
Սիրս ընկաւ
Երկնքէն.


Ի՞նչ կրկնի
Ինձ տանէ—
Զրոյնէ.

Իմ ցար
Ջանս ընկաւ
Էդ ձենէն...

Ինձ մեծակ
Դաշտի մեջ
Զրոյնէ,
Կռուկներ...

Ասացի՝
Կռուկներ՝,
Ղարիպներ՝,

1897



* * *

Քամին գալիս դուռն ծեծում,
Պսիկ սանն փակուած դուռ,
Ձեն ու ծպսուն էլ չի՛ լսում,
Տունն կանգնած է մունջ-լուռ...

Ա՛յս, ամայի դասարկ մնաց
Փոքրիկ, ցածրիկ իմ տունը,
Բարդիները գիշերն իբաց
Խշխշում են բակումը...

Մայրս, եղբայրս գնացել են
Ամուր փակել դուռն-երդիք,
Քամուն տուել — գնացել են
Նա ծեծում է դուռն-երդիք...

Թռչուններս, իմ Սուրիկ շուն,
Ծաղիկներս ի՞նչ եղան,
Եւ պարեգս սիրուն, նախուն
Իմ յոյսերն ի՞նչ եղան...

Մայրի՛կ, էլ բաց դուռը, եկա՛յ... —
Քամին ծեծում է դուռը,
Բարդիներս գիշերն իբաց
Խշխշում են բակումը...

1898

* * *

Վախ, ես կրակը ո՞վ կրմարե.
Ծաղիկներս ի՞նչ եղան,
Իմ բլբուլը ու՞ր կորաւ,
Վառ ասղերը ո՞վ մարեց,
Քափուր վարդը ո՞վ փաղեց...
Վա՛խ, ես կրակը ո՞վ կրմարե...

1898 Ադեֆս.

* * *

Ընկե՛ր, ընկե՛ր, արի իրար հետ մենք լանք.
Մտերմութիւնը սրտերիս — կորուցիմք,
Քաղցրութիւնը ընկերական — կորուցիմք,
Ծաղիկ կեանքը, կանաչ կեանքը — կորուցիմք,
Գարուն օրը, ազատ օրը — կորուցիմք,
Վառ արեւը՝ մեր տաք սերը — կորուցիմք.
Ընկե՛ր, արի իրար հետ մենք նստիմք լանք,
Ել շողիկ չի ցայրի, էլ ծաղիկ չի բացուի...

1898 Ադեֆս.



* * *

Արտասուաշող դեմքը քննու՛
Ա՛յս, մարել է ինձ համար,
Անհետացել՝ երգերն անու՛ —
Դեղձեղանքը սիրավառ.

Քարերի մեջ այդպէս մեկ օր
Խարակուում են շուշաններ
Եւ չփանում՝ սիրասոյ՜ն
Կեանքի սիրուն նշաններ...

1908 Բալզու.

* * *

Վա՛խ, սարի վրայ
Իջել է մեռու,
Զոհել է ամպը...

Սեւ ամպը եկաւ
Ու սրժիս չոքեց —
Ծանրացաւ սիրսս.

Ծանրացաւ սիրսս,
Սեւացաւ սիրսս —
Ընկայ փառեփառ...

Շունչս՝ կտրուե՛լ,
Կրակս՝ հանգե՛լ,
Ու մթնաւ աշխարհ...

Վա՛խ, սարի վրայ
Իջել է մեռու,
Զոհել է ամպը...

* * *

Բարձր ժայռից ես նետուիմ ծով —
Ծովը հանդարտ ու լռիկ,
Խորը սուզուիմ ջրի միջով
Անդունդները անառիկ.

Սեւ այնտեղ շող-աւազի մեջ
Մամուռ ու փառ գլխիս տակ՝
Ննջեմ հանգիստ, խորը ննջեմ
Հանդարտ ու լուռ ծովի տակ...

Երեւան 1901

1907 Բագու.

* * *

Հայրենի բնից, հարազատ երկրից
Ես՝ մի անջատուած ու պոկուած սերեւ —
Տարուում եմ հողմով սիրած ավերից՝
Ես հայաժախան, ես մութ, անարեւ.

Ինձ դառնացրին կրքերն անյագուող,
Իմ բարեկամը, դաւանանողներ,
Ինձ փաթաթեցին շունչեր բարկ ու ցուրտ,
Մտովս սիրեցի... բայց սիրսս զարկուել...

Հարազատ ավից՝ իմ հայրենիքում՝
Անարգուած, զրկուած բարեկամի ձեռքով,
Աշուն սերեւի նման ես անտուն՝
Մտք ու սրտում տարուում եմ հողմով...

1899 Երեւան.

* * *

Կոծում է բուրբ, ուռնում է սեւ շուն,
Զիւն ու չոր սերեւ խաղի են ընկել,—
Ա՛խ, համբեղ մոլոր,— քո բունն ես ուզում,
Հողմավա՛ր քոչուն—հողմավա՛ր ընկեր:

Դուն ու՞ր ես քոչում, դուն դիպչում ես ու՞ր...
Քամին է շաչում—ձիւն, սերեւ ցրիւ,
Գալիս բնիդ փոխ շրջում ես իզուր...
Ա՛խ, դու բուն չունիս, ա՛խ, զուր է կոխ...

Մերիկը փանդեց, աւերեց քո բուն,
Փակեցին համբեղ փամփներ դժկամ,
Հիմա քո տունը՝ մեռու է, հեռուն—
Բնեգո՛ւրկ քոչուն—հոգո՛ւս բարեկամ...

1906 Ադեւ.

Ես՝ բեզարած նախորդի պես՝ աշխարհիցս շուռ եմ գալիս,
 Մարդից զարկուած, վարդից զարկուած՝ հովարդի պես
 ժուռ եմ գալիս,
 Լեն աշխարհում or չեսայ—սրսով եկայ, անսիրտ
 կ'երբամ,
 Բարեկամներ, երկրի մարդիկ ես ձեզանից շուռ եմ
 գալիս...

Մեզ չի մնայ ես աշխարհը—ես աշխարհը վարդ ու փրժի,
 Ինչպես եկանք՝ եկաք կ'երբանք—մերը չե կեանքը վարդ
 ու նրժի.
 Ունեցողն էլ՝ հողի բաժին, չունեցողն էլ՝ հողի բաժին,
 Լաւ ե ապրես հոգուդ ուժով, լաւ ե ապրես միշտ ան-
 բաժին.

Լեն աշխարհում, շեն աշխարհում մեմակ կ'երբամ,
 բեզարած կ'երբամ,
 Սիրս՝ դադրել—խորք եմ դարձել—խորք-մօրի եմ կեան-
 քում փարբամ.
 Հալալ մարդիկ, սրտի մարդիկ չկան էստեղ, ես աշխար-
 հում.
 Մարդու տեղից, մարդու խօսքից կետացել եմ, փախուս
 կուտամ...

Թե ես ասեմ՝ շատ եմ տանջուել, չեմ հաւատայ իմ
 տանջանքիս,
 Թե՛ ես ասեմ, շատ եմ լացել—կ'ասեմ՝ մեզ ինչ շատ ես
 լալիս,
 Վա՛յ ե նրան՝ սիրտ բաց ե, վա՛յ ե նրան՝ խօսք ազատ,
 Վա՛յ ե՝ հոգիդ շող՝ որոնե, վա՛յ ե՝ լինիս երազի մարդ...

1903 Սդեքս.

Հարսի նման դու գուգուել ես, Զանգու՝ ձոր.
 Շող-ծաղկունքի մեջ կորել ես, Զանգու՝ ձոր.
 Հաւ ու բզեզ ձեն են բռնել ջրիդ հետ,
 Հաւ ու բզեզ երգ են երգում սրտիս հետ:

Ժեռիդ վրայ շողշողում են աստղն ու ցօղ,
 Զրիդ վրայ վառում, ցոլում գոհար-շող,
 Ախ՞, մտքի մեջ՝ ափիդ կայնել եմ մօլոր,
 Անուշ ձենով, փափուր հոսով, Զանգու ձոր...

Գարուն օրով՝ ես ի՞նչ սուգ ե սրտիս մեջ,
 Գարնան աշխարհ, սիրս դարձաւ աւերակ,
 Հայրենիքիս ցաւն ե սրտիս մեջ վառուեց,
 Գարնան վարդի փուռն եր սիրս խոր ծակեց...

1899 Երեւան.

Ինչպես ոսկի ամպ նա երեւցաւ քո պարզ երկնքում
 եւ շողք սփռեց, մանուկ, քո անմեղ, սիրուն աչքում,
 եւ ամպի նման մեղմիկ սահելով սրտիդ մեջ անդաւ—
 Նա ցրիւ եղաւ անվերջ ոլորտում, նա ցրիւ եղաւ...

Եւ ծաղիկ դարձած՝ նա նորից եկաւ, ծաղիկեց սրտիդ մեջ,
 Երգ դարձած՝ հնչեց խաղաղ գիշերին—հոգուդ մեջ հնչեց.
 Մանուկ, ծաղիկի պես նա քառամեցու առնկի շնչով
 եւ երգի նման լուեց, երբ հողմը փչեց սխրաբով...

Ինչպես ոսկի ամպ ուզում ես կրկին երեսիդ ժպտայ,
 Կամ ծաղիկ դարձած՝ սրտիդ մեջ ծաղիկ—բուրե, գուրգուրա՛յ,
 Երգ դառնա՛յ՝ հնչե քո ջիւնը հոգու մեջ գիշերուայ ժամին.—
 Նայի՛ր, վաղուց ե նա աստղիկը չկա՛յ երկնքին...

1891 Պուլախի

* * *

Եւ նա՝ խաբուսիկ
Երագի նման՝
Հմայեց հոգիս,
Որպէս խոր ուկեան.

Եւ նա՝ կասաղի
Վիշապի նման՝
Զարկեց իմ սիրտը
Կայծակով վառման.

Եւ քափառում է
Որպէս ուրուական
Քաբանդ ու աւեր
Իմ սրտի վրան...

1937 Աղև.

* * *

Ա՛յն. խելսեում են բարդիներ
Իմ հորական բակի մէջ,
Երեւում են քաւ գլուխներ—
Տերը չկայ նրանց մէջ...

Պառ աւ մերիկս է դնդնում
Նրանց շուքում միայնակ,
Որդու համար է աղօթում
Բարդիների շուքի սակ...

1907 Բագու

* * *

Ո՛չ, գեղեցկութիւն, սոսկ գեղեցկութիւն
չորոնեցի քո մէջ,
Եւ զմայլանք, սոսկ հրապուրանք ինձ
չքհամակեց.—
Այլ սի՛րսը, սի՛րսը—կենսաբով սիրտ
սիրեցի քո մէջ,
Այլ դառն կեանք, քանգանքի կեանք մեզ
միացրեց:

1898 Աղև.

* * *

Ծաղիկը, գարունը, վարդերը, յոյսերը սրտումս
բուրեցին.
Արեւը, աղեղը, զարդերը, յոյզերը ինձ
պարուրեցին.

Ծաղիկը, գարունը, վարդերը, յոյսերը բռնել
են... խաւել,
Արեւը, աղեղը, վարդերը յոյզերը մարել են,
մարել...
1907 Աղև.

* * *

Կոկոն եր՝ չըբացուե՛ց—խորհակը զարկեց—
չորացել է այն.

Աստղիկ գեղաժայիս՝ երկում երեւեց—
կորա՛ւ յաւիտեան.

Թռչունի դայլայիկ՝ հրապուրիչ, չֆնաղ—
ընդհատեց չար հոգի.

Շատրուանի շիքեր՝ գլղուն, հրաշաղ,—
ցրուեցին չորս կողմ.

Երգ եր սրտումս՝ պոկուեց իմ սրտից,—
չդարձաւ այնեղ.

Յոյս եր կենսաբոյր իմ կրծքի միջից—
ենչուն ու գեղգեղ.

Մի վարդանշող գեղանի անուշ—մեղմիկ,
նեղալար,—

Զկա՛յ... ու աննե... Օ՛, սի՛րս իմ, մի լար,
Օ՛, սի՛րս իմ, մի լար...

1896 Աղև.

* * *

Գեհառն ե խաղում
Նորայ քաղի սակ,
Անուշ ե խաղում.

Ծիրանին, դեղձին
Խոնարհուել ջրին—
Շուաֆ են գցում.

Թաւիշ, դեղնաւուն
Ծաղկունքն են զարդեր
Խաղացող ջրին.

Այգիների մեջ
Հայունիք ազաս
Խաղող են քաղում.

Խոհերն ու կասկած
Խաղում են, կիսում
Իմ նամբի առաջ—

Շուաֆ են գցում,
Եւ սիրս մտնում
Սիրքս են քաղում...

1901 Երեւան

Տ Ս. Պ Ս. Ն Ս. Գ Ի Բ

Շողազարդ, ֆողազարդ արեւի նման
Ժպտացիր, խայտացիր վառվռուն Շողի՛կ,
Ա՛ն, քո գարունը դարձաւ գերեզման—
Գիշերը պատեց քո կեանքին ծաղիկ.
Եւ զարման սիրուն շուշաններ դժգոյն
Քո մասաղ կեանքը լալիս են սրտում...

1902 Ադիս.

ՀԱՅՐԵՆԻ ՄՐՄՈՒՆՋՆԵՐ

* *

Ես սարի շիւղ, ես բարդու նիւղ—
Շորակեալի ծա՛ռն եմ ես,
Ես ձորի մուփ, դաշտի մեուշ,—
Շորակեալի սա՛րն եմ ես...

Դուրսն սեղր կանգ ա՛ն՝ ձէն սառ—
Շող-աչե՛րով ջա՛ն աղջիկ,
Արան սեղր կանգ առ—կուգա՛մ,
Նախշուն-երես հա՛յ աղջիկ...

1900 Աղէֆս.

* *

Անյայտ երգերս, իմ ուշեր, յոյսեր՝
Վաղ ժամանակից հոգուցս բխած—
Ես բաց եմ անում ահա քո առաջ
Չայրոյքս, սերս—իմ վիշտն, իմ յոյգեր.
Անհամբոյր կեանքի ծածկել եր նրանց,
Եւ անյայտութեան քանձը ֆողի տակ
Չեն ուզում մնալ լուռ, անյիշատակ—
Դալիս են աշխարհ—երազներս վաղանց...
Եւ հա՛յ ժողովուրդ, քո միջից ծնուած
Որդուդ երգերը քեզ են նուիրուած...

1907 Աղէֆս.

—33—

Հասուած «Երաւի գիւղերն»-ից

Ա՛խ, քո աշունն, իմ չոր երկիր, իմ նախնական
ճոխ Երաւի,
Քո գաշտերը հարթ ու նախշուն—շուրջը լեռներն
ու դարակ,

Ուր ոսկեշող քո գալարուն, մարմանդ զեռերն
են հոսում

Եւ արօտում ջրերի քով կերկերներդ անտնում...
Ես մտադրազ ման եմ եկել, մերկ լեռներիդ եմ
հաչել.

Ահա՛, մենակ, մենակ բարդին ջրաղացի մօտ գեղ-
նել...

Կանգնած է լուռ մեղմ օդի մէջ... Ես աչքերս եմ
ուղղում ձեզ՝

Դաշտեր, քարեր, չորցած գետին, դալար տափեր,
վալրի սկզ,

Իմ հալրերն օջախ և բուն, իմ հարազատ խիտ
երկիր՝

Գիւղականի ջանքին կարօտ և միշտ կեանքով
վշտակիր—

Ես սիրում եմ քո չորութիւն, քո սոսկ փուշը,
քո ծղօտ,

Քամուդ ձախը, քո խեղճ մարդուն, քո բարեկամ
եմ սրտոս...

Եւ երբ հիւզում քո գեղջուկներ զիշերներն են
հաւաքում՝

Նրանց խօսքին ու երգերին ունկնդիրդ եմ զդա-
շուն,

Եւ թմրուիր, փողն ու տիկը երբ լսում է տանդ
մէջ—

Ես սիրողդ եմ, ուրախացող, հետաքրքիրդ եմ
անկեղծ...

— Գիշերուադ մէջ խշխշում են ուռնի, բարդին
զլլտակոր,

Քամին շաչում—դադարում է, ոռնում շունը ալե-
ւոր,

Իր չունդուն է հնչեցնում փոքր եղբայրը մեղ-
մարար,

Եւ «մանկիկս» կեանքով լցուած՝ երգ է երգում ինձ
համար...

1902 Աղէֆս.

* * *

Օ՛, լեռնային երազելի տեսարան,
 Լեռների գագաթներ, բլուրներ, անդառնալիս—
 Մտեր եմ ներշնչում,—մտերս միացնում.
 Եւ պապերիս հողը սիրով եմ, ես սիրով...

Թե՛ գայ օր՝ երբ բաղդն ինձ անջատում վիճակե—
 Ես ի՞նչպէս պիտի պոկուեմ ձեր գրկից.
 Ի՞նչպէս կը քողմեմ ժողովուրդը ձեր միջի—
 Ձեր ոգին, ձեր շունչը, որ միշտ ազատ է...

Սակայն, սիրս իմ, սիրս,—հանգչի՛ր, հան-
 գիւտ առ,
 Սերը ժողովրդի կը մնայ քո մէջ վառ.
 Երբ մենակ եւ օտար՝ լինիս երկրից դուրս—
 Քեզ հետ միշտ կ'ապուած՝ քեզ կը լինի խախտյալ...

Եւ ես կը սիրեմ հողն իմ հայրենիքի,
 Չարսխնդաց հակասազի՛ր, նետի՛ր ինձ հեռու—
 Նրա քամու, չոր քամու լեզուին ցանկալի
 Կը մնամ ես լսող, հաւատարիմ եւ հիւս...

Իսկ իմ շունչը կը հանգչի՞ ալդ վայրերում,
 Ուր՝ բուրի կ, բուրիկներ, զուարթ ծամեր
 անցուցի,
 Ուր՝ ախորժ ու չմնաղ ձեր քննոյւ աշխարհում
 Երգչին գգուեցիք, երգչին ճանաչեցիք...

Կը հանգչի՞... քաղց ո՛չ. սիրեցիք ինձ այնտեղ...
 Ընկերուհի՛ս, կը մոռանա՞ս... եւ մի՞թե
 աշխարհում
 Չես մնալ մինչեւ վերջ դու ինձ հաւատարիմ,
 Եւ յիշատակս կը մեռնի այդտեղ...

1897 Հառիճ

* * *

Իմ գլուխը՝ ժեռիդ վրան,
 Հովդ զարկե՛ հակասիս,
 Երկնիդ դեմ աչքերս բանամ,
 Նայեմ զուլալ աստղերիդ:

Ազատ շնչեմ լեռիդ վրան,
 Սիրս բացուի ու լըցուի՛...
 Եւ իմ հոգին հովերուդ հետ
 Սար-ձորի մէջ քափառի՛.

Ծաղիկներուդ կուրծք սուզուի,
 Առուներուդ հետ գնայ,
 Սարիդ վրայ մշուշ լինի,
 Ամպի, քամու հետ խաղայ.

Քնած արևում, ճանջուած արևում
 Յոյսի նման նա զարթնի,
 Գուռէ... վարէ... անհետանա՛լ,
 Ինչպէս շնչուն մի ոգի...

1898 Երեւան

III

Առուն կ'երթայ ժիր, փչան,
Ուռն նիւղերը—քշոց,
Բանից պրծի՛ր շուտով, քո՛ւր ջան՝
Գործես, զամբիլ ու ֆոց:

Ահա՛ն ծագեց զառ-վառ լուսին,
Քամին խաղաց սուրալով,
Տերեւները դեղին-դեղին
Մեկ-մեկ քափուան դողալով:

Ես էլ երբամ ու բռնեմ ման,
Հողը վարենք ես զիւր,
Վե՛ր, փութի՛կ ջան, դու կապե՛ հաց,
Չուսիկներս վեր կաց բեր...

1905 Ադէս.

* * *

Մքնեալ զիւրեր՝ երկնականարին
Աստուղն արծաթե նոխ պար եմ բռնած,
Եւ լորիների սաղարթներ մքին
Լուռ նկարում եմ երկնի դիմաց.

Ես չեմ սպասում՝ մրրբիկ կուգայ,
Հանդարտ շրջում եմ հովիկն ու տերեւ
Եւ երազի պես առջեւս ահա՛
Իմ հեռու երկրում շողում է արեւ.—

Գարունը այնտեղ նոր կեանք էր բերել,
Ու նուիրական Ծաղկասօնի հետ
Այնտեղ ողջ կեանք ու ցնծում էր սիրել
Եւ գեղջկուհիներ երգում էին երգ...

Պուլաի. 1889.



* * *



Վիզդ ծռած, դարիպ ախպեր,
Ի՛նչ իստուր ես ման գալիս,
Յաւդ վաղուց եմ հասկցել,
Ա՛խ, ինչ դարդոս ես լալիս:

Ձե՞ որ՝ «ախ»-ով՝ զիւրեր-ցերեկ՝
Տափոս զարուն կուգի՛ր.
— Ձիւնը անցնի, բացուին նամբեք՝
Երբամ երբամ իմ երկիր—

Ա՛խ, եկաւ ու անցաւ զարուն,
Դու դեռ դարիպ մնացիր,
Քու նամբեք հե՛նչ չի բացում—
Ախպե՛ր, ծուռ վիզ մնացիր:

Աչիդ ֆգե՛—ուրիշները
Իրանց տուն ու տեղն ունին,
Հո՛ղ, աշխատանք,—իւրսերը.
Ի՞նչ է եղել քո ուժին...

Ի՞նչ այրուած է սիրդ. ախպե՛ր,
Արի՛, դարդիդ ես ընկեր,
Ա՛խ, քո հողը դու մի՛ քողմիր—
Հո՛ղն է, հո՛ղն է քո ընկեր...

1889 Պուլաի.



* * *



Հայ գիւղացու դեմքն—ամպ ու սուգ,
Զորին նստել է լռիկ,
Մութ աչքերը ծով-արսրում,
Սիրսն էլ կրա՛կ է սասիկ...

Անձրեւ չկա՛յ... հացի կարօ՛ւս...
Ախպե՛ր, խոր է քու վերքը,
Դրա համար այդպէս վճսոս
Տարածւում է քու երգը ..

Ա՛խ, շատ հին է, քու «խաղն» է հին,
Ախպե՛ր, ցաւ ու կսկիծ կայ,
Մընտել է քու պարզ հոգին—
Չե՞ որ՝ ձմեռը կուգայ...

Հայ գիւղացին վճսոս է շատ,
Ինձ պատասխան չի տալիս,
Քամին մռայլ ու յուսահատ
Գուժկանի պէս է լալիս...

Գուժկանի պէս ցաւ ու կսկիծ
Աշխատողին է բերում,
Նրա դռնից, լուսամուտից
Կարի՛ք—եղբայրն է գոռում...

1890 Ադէֆս.



* * *



Ասդեր շողան երկնի վրայ
Ու կըծպտին քանց աչքեր.
Թաւ ծառերի, ծաղկանց վրայ
Շողն ու ցողն է վար իջել.

Մայրը նստել դռան առջեւ
Ու կ'օրօրէ օրօրոց,—
Ահա՛ն լուսնեակ տեղէն ելաւ—
Շողքը քցեց մանկան ծոց:

Կըստորեն դառն մտքեր
Քննու՜ւմ սիրք մայրենի,
Իսկ մանուկը մաղիկ-մաղիկ
Կուլայ—քունը չի տանի...

Նրա հայրը չկա՛յ վաղուց—
Աշխատանքի է գնացել,
Մայրը նստած՝ կուլայ կուց-կուց,
Ճամբէն կ'առէ անհամբեր...

1893 Ադէֆս.

ԱՆԻ

Անին շէն, աշխարհն աւեր,
Անին աւեր, աշխարհն է շէն...
Հին ասուածք:

Դաշտի մէջ միայնակ երիւարս եմ հռում.
Առջեւս—հաղաւթ, աշտարակ ու պարիսպ.
Ողջոյն ձեզ շինուածքներ, մեծ հաղաթ լեզ ողջոյն.

Յուզուում է սիրս լուռ եւ միտս, իմ հոգին
Թախծում եմ անորոշ. այդ դաշտում, ուր հիւսա
Գնում եմ—խաղում եր երբեմն այրուծին...

Դիակի, արեան տեղ—ծաղկումն եմ անբառաւ՝
Քարերի կոյսերից նայում եմ ու բուռում.
Սմբուլներ, վայրի սե՛զ, քաջունի նոխ երա՛մ...

Ո՛, դաշտեր, երբ ձեզ լեզու տա մեծ Աստուած—
Կարո՞ղ եր գգայուն, վառ սիրտ չը լուզուիլ,
Լսելով ձեր խօսքեր, անուշիկ ձեր ասուածք.

Դուք չունիք խօսք, լեզու, բայց խօսք եք դուք ամբողջ—
Բերաններ բխրաւոր բացուած եմ ձեր միջից.
Դուք չե՛իք անապատ, դուք չե՛իք գայլի սրջ.—

Մեծեր եւ իշխաններ ապրել էին ձեր մէջ...
Ահա ես մօտեցայ. ձիս էլ է պահպանում,
Դարբասից հնադարեան սարսում է, չի մտնում.

Խոնաւ օդն է դիպչում, հով բերում երեսիս,
Եւ անեղ կամարներ քնդում եմ յասակից.
Մտնում եմ հաղաթ՝ աւերա՛կ ու քախ՛ծ.

ձպուռն է նռնում քարի տակ, խոտի մէջ,
Մոլեւոր պան մտնում հանդրաւած ծերպերում,
Պատի տակ սողում է, շուռն է օձը մեծ:

Մի ամբողջ, մի կանգուն ո՛չ մի շէնք ու տանաւ...
Շինուեցի՛ք, կործանուա՛ւ ա՛խ, ինչու, ա՞նձ համար՝
Փառքերի՛, մեծութեա՛ն, հայրենի՛ սրբավայր...

Անուրջի, մտքի մէջ լռիկ ջուրն Ախուրեան
Յամբաբայ հոսում է... նիրհի մէջ՝ մերք ընդ մերք
Մրմուռներ է հանում, տեսնում մեղմաձայն:

Օ՛, վիշտն ինձ տանջում է եւ զարկուած, վայր ընկած
Այդ այրուած քարերին՝ քափում եմ արցունքս
Եւ մտն ու մորմոք նայում եմ ես գետնին.

Կըզարբնե՞ս, կըշարժուի՞ս, ի՛մ հոգիս, դու նորից,
Կ՛ապրի՞ս նոր կեանքով... քե ինչպէս աւերակ՝
Կըլուե՛ս, կըմարիս՝ կործանուած վշտերից...

1894 Անի.

* * *


Տեսե՛ք—սարն է դումանն առել,
 Տեսե՛ք—հանդն է դումանն առել,
 Ծաղիկներն են ապուռ դարձել,
 Զուրն ու առուն կանգ առել...

—Չե՞ որ՝ Մարօն սարն է փախել,
 Մարօն քողել է եարին,
 —Չե՞ որ՝ Մարօն սերն է մոռցել,
 Օձ է սեղմել սափ կուրծքին...

Սիրած տղան խելքը կորցրած՝
 Սար ու ձոր է պսրսում,
 Սիրքը կրակ, սիրքը կսկիծ՝
 Սար ու ձոր է պսրսում...

Դրա համար սա՛րն է դուման,
 Մուծ է չորս դի՛ն—հանդ ու դաճ,
 Ծաղիկներն են ապուռ դարձել,
 Զուրն ու առուն կանգ առել...

1896 Ադէֆու.



* * *

Դաճի մեջ, ձորեղբեր
 Կարկաչում է կափաւ,
 Կաղկաչում է կափաւ
 Սիրոյ ե՛րգ—սիրոյ ե՛րգ:

—Ա՛յս ո՞ւր ես, դու, մարի՛,
 Քարի սա՛կ, փոսումն ես,
 Ընկերդ կուգէ քեզ,
 Նախճունի՛կ, շուճ արի՛:

—Թե՛ ձորում—ջրերի,
 Ծաղկանց քով ման կուգաս՝
 Կըլսես, կ'իմանաս
 Զայնը քո ընկերի:

—Բայց չի՞նի՞ զոհուեցիր
 Որսորդի կրակին—
 Ի՞նչու քո ընկերին,
 Ա՛յս, կափա՛ւ, մի՛ կանչիր...

1897 Անի



ԶԱՆԳԻ

I

Զանգի՛ն կուգայ... Զանգին եկա՛ւ զրնգալով, զնգալով,
Բաղ ու բաղչի միջէն կուգայ՝ խորունկ ձորք քունդ տալով,
Այագեագի բովէն կուգայ, բերնին փրփուր՝ սօք տալով--
Սրիս խորքէն ելել կուգայ, վռագ-վռագ՝ զնգալով...

Էս ի՞նչ տեսակ ցաւ կայ սիրսս,--անունն դարիպ եմ
դարձել.
Հայայ Զանգի՛, տուն-տեղ քողած՝ քեզի բնկեր եմ դարձել,
Անգին մօրս մեռակ քողած--ժեռիդ, բարիդ եմ կպել.
Սիրսս մուրազ, սիրսս կարօս՝ մի անբուն հաւք եմ դարձել...

II

Փռւս ու դուման կ'ելնի սարէն--վա՛յ վա՛յ չըլնի ձիւն
եկաւ,
Դառն ու դուրան, նար ու նամբայ չըլնի՞ իրեն տակն առաւ...
Զանգի՛, Զանգի՛, մասա՛դ ձենիդ--մեր սարից մի ծա-
ղիկ բեր,
Անգին մօրս արքաունքը, անգին մօրէս խապար բեր.

Քուրիկներիս, բնկերներիս արտի սերը պոկե՛ք բեր,
Վառուած արտիս, կարօս արտիս, ա՛խ, Զանգի՛ ջան, մի
դեղ բեր.
Ժողովրդիս երգն ու մումունջ, խօսքն ու տրտման շուն
ինձ բեր--
Զրիդ ձենին, շրիդ երգին մասաղ ըլնիմ Զանգի ջան...

III

Դումանն առա՛ւ սարք չօրս դին, դումանն առա՛ւ իմ
արտիս,
Զանգին կուգայ Այագեագէն--զրնգալով, զնգալով.
Սրիս ցաւին դարման չկա՛յ. խաբար չկա՛յ բնկերէս--
Ես ո՞նց մնամ անհայրենիք--Ես ո՞նց մնամ անընկեր...

1898 Երեւան.

ԻՄ ՎԱԹԱՆԸ

Ես եւ հողին լինիմ մասաղ, ի՛մ վարան,
Ես եւ ջրին լինիմ մասաղ, ի՛մ վարան,
Իմ արեւըս ես քեզի տամ, իմ հող ջան,
Զանել ջանս քեզի համար--ի՛մ վարան...

Ասա՛, եարաք, կը լինի՞, որ դու ծպստս,
Քանց զարնան վարդ՝ կարմիր հագնես, ի՛մ վարան.
Ասա՛, եարաք, կուգա՞յ մի օր՝ դու խնդաս--
Որդուն զսա՛մ մի ծերունի հօր նման...

Ես եւ հողից բուսած վայրի ծաղի՛կն եմ,
Այագեագի, Արիաչայի սմբու՛լն եմ,
Ես եւ ժեռի, բար ու փոյի մամուռն եմ,
Քու շունջ քաշող ժողովրդի մունջ շունջն եմ...

Քամին խաղայ սարիդ վրայ--երվերայ,
Ուռին խռայ ջրիդ վրայ--խրչխրչայ,
Արեւն ելնի, սարից ելնի--չողչողայ.
Սրեղ ելած՝ ես եւ շահիր--երգի՛չն եմ...

Հողդ համբուրեմ, տա՛մ համբուրեմ--ու երբամ,
Կար արցունքս հողիդ քալիւմ--ու երբամ.
Անուշ վարան, մասաղ լինիմ եւ հողին--
Կտորմ հող պանե՛ հանգչի եւ որդին...

1900 Ադեւ...

Մ Օ Ր Ե Ր Գ Ը

I

Բալիս կորուցի, լալիս կորուցի,—
 ու՞ր է, ել չկայ.—
 Գիշերը կուգայ—կ'աշեմ չորս կողմս՝
 ջանիկս չի գայ.
 Ես ոլոր-մոլոր՝ խելառ եմ դարձել—
 ենոր կը փնտռեմ,
 Ձազը կորուցած գազանի նման՝
 խելիս եմ կորուցել,
 Պաշերուն կ'երբամ, դռներուն կ'երբամ—
 ել ձեռք չի գայ,
 Գիրկս կը բանամ, որ կուրծքիս սրդմեմ—
 բալիկս չկայ,
 Խելիս վրես չե՛, ուշիս վրես չե՛—
 ու՞ր է իմ ձագս,
 Ձանս վրես չե՛, սիրես տեղը չե՛—
 կորաւ իմ ձագս...

II

Ա՛խ, բարի մարդիկ, աշխարհի մարդիկ—
 դուք տեսա՞ք ենոր,
 Խլվան բալիս, բլբլան բալիս
 տեսե՞լ եք մեկ օր,
 Արեւ աչքերը, գիշեր աչքերը
 աշե՞լ եք ենոր,—
 Թոքիկ քաքերը, բոբիկ տոտերը
 պաչե՞լ եք ենոր,—
 Բլբլան լեզուն, վրվրվան շրթունք
 պաչե՞լ եք ենոր,
 Հրեշտակի փունք—անուշ սուրբ փունք
 տեսե՞լ եք ենոր...

III

Կ'առնեի գիրկս՝ նանիկ կըսեի—
 անուշ կըմար,
 Թաւ քարիչները—խաւ քարիչները
 արեւ կը շողար,
 Ես ել կ'աշեի քաւ քարիչներուն,
 խաւ քարիչներուն,
 Շունչս բռնեի՝ ականջ կ'անեի
 բալիկիս շնչին.—
 Ախ, հարհանդ—մարմանդ անեղ հոգու պես
 կըճնար բալես,
 Ու սրժիս բեռը—սար-սար դարդերս
 կ'երթային մտքս...

IV

Հիմի եմ չկայ—բուի պես մեռակ
 բոլորս կ'աշեմ,
 Արեւածագի երգողս չկայ—
 քնիս մեջ լսեմ,
 Թռվռան, քոքիկ քոչունս չկայ՝
 ձեռքիս մեջ բռնեմ.—
 Ա՛խ, բարի մարդիկ, աշխարհի մարդիկ
 տեսե՞լ եք ենոր.
 Թե տեղը գիտեմ մասադիս, ջանիս—
 բերեցե՛ք մեկ օր.
 Թե կորուցել եմ ու տեղը չ'իտեմ
 մարդ ու բանական—
 Ես ել բուի պես վալելով պիտի
 իջնեմ գերեզման...

ԱՐԱԳԻԼ

I

Դու—արևան ծաղիկ,
 Դու—գարնան ծաղիկ
 Արագիլ ախպեր.
 Դու արևան ծաղիկ,
 Դու գարնան ծաղիկ,
 Տարագի՛ր ախպեր.
 Թե՛ «ուրին» չեկար՝
 «Ըննին» չես մնար—
 Արագիլ ախպեր.
 Թե՛ «ուրին» չեկար՝
 «Ըննին» չես մնար—
 Տարագի՛ր ախպեր...
 Դու—արևան ծաղիկ,
 Դու—գարնան ծաղիկ,
 Արագիլ ախպեր—
 Դու արևան ծաղիկ,
 Դու գարնան ծաղիկ—
 Տարագի՛ր ախպեր...

II

Սարերի վրայով,
 Ծովերով, ջրով—
 Կուգաս քեւաքափ.
 Ամպերի փեռով,
 Դուրանով, մեռով—
 Կուգա՛ս քեւածափ.
 Բու՛ք ու բորանը—
 Քամու բերանը
 Հեծել ես կուգաս.
 Տարուայ նշանդ
 Սիրուն բերանդ
 Առել ես կուգաս.—
 Թե՛ «ուրին» չեկար՝
 «Ըննին» չես մնար,
 Արագիլ ախպեր.
 Թե՛ «ուրին» չեկար՝
 «Ըննին» չես մնար,
 Տարագի՛ր ախպեր:

III

Դռանս հարքին
 Կ'օրօրայ բարդին՝
 Վրան քո բունդ.
 Դռանս մայքին
 Կ'երերայ բարդին՝
 Վրան քո տունդ...
 Կուգաս, որ բերես
 Նշանած օրուան
 Խորհուրդը տարուան.
 Կուգաս, որ իջնես
 Հիմաւուրց բնիդ—
 Օջախիդ, շէնիդ:
 Դու—արևան ծաղիկ,
 Դու—գարնան ծաղիկ,
 Արագիլ ախպեր,
 Դու—արևան ծաղիկ,
 Դու—գարնան ծաղիկ,
 Տարագի՛ր ախպեր...

IV

Ընկերներ ենք մենք,
 Վաղուայ եղբարք ենք,
 Տարագի՛ր քոչուն.
 Երկուսս էլ սիրող,
 Երկուսս էլ սիրող
 Հօր օջախ ու բուն.—
 Ու—փափագ, կարօս՝
 Քու համբեղ կ'աշեմ՝
 Մոլոր ու զազագ.
 Ու—պապակ, կարօս՝
 Ձենդ կրփնսեմ՝
 Մոտի մեջ երագ.—
 Թե՛ «ուրին» չեկար՝
 «Ըննին» չես մնար
 Արագիլ ախպեր.
 Թե՛ «ուրին» չեկար՝
 «Ըննին» չես մնար,
 Տարագի՛ր ախպեր...

V

Ա՛խ, բնիկեր քոչուն,
 Եարա՞ք էս սարուն
 Ի՞նչ առել կուգաս.
 Եարա՞ք, էս սարուն
 Կրբերես արո՛ւն—
 Արունո՞վ կուգաս.
 Թե՞ ոսկի ծղօն
 Կրբերես մեզ խոն՝
 Արեւո՛վ կուգաս.—
 Թե՛ բերես մեզ մօս
 Դու շուրն արունոս—
 Ա՛խ, սիրսս՝ արուն.
 Թե՛ բերես ծղօն՝
 Կրբերես մեզ խոն—
 Սիրսքս է ծաղիկ:
 Դո՛ւ— արնան ծաղիկ,
 Դու— գարնան ծաղիկ,
 Արագի՛լ ախպեր,
 Դո՛ւ— արնան ծաղիկ,
 Դու— գարնան ծաղիկ,
 Տարագի՛ր ախպեր...

VI

Թե՛ արուն բերիր
 Ու սիրսդ արուն՝
 Եղար սարեգիր—
 Արագի՛լ ախպեր
 Չեմ մնալ էս ել—
 Լինինք սարեգիր.
 Թեւերիդ ա՛ն ինձ՝
 Էն ձիւն ամպերով,
 Ասդերի միջով—
 Հեռասան սար ինձ՝
 Լինինք սերս բնիկեր
 Աշխարհի միջով...
 Թեւերիդ ա՛ն ինձ՝
 Թունենք Աստու մօս,

Լինինք զանգասուր...
 Դարկիւն եղած
 Օջախից բնից՝
 Լինինք զանգասուր.
 Թե՛ «ուրին» չեկար՝
 «Բննին չես մնար,
 Արագիլ ախպեր.—
 Ա՛խ «ուրին» արի՛,
 «Բննին» մի՛ մնար,
 Արագիլ ախպեր,
 Տարագիր ախպեր...

1905 Ադեֆու..



Արեւն եկա՛ւ—սարերն անցա՛ւ,
 Մրցեաղ է, յոյս չկա՛յ.
 Քամին փչեց—ծառերն անցաւ,
 Տեւեաքափ է, յոյս չկա՛յ.

Յար սիրսս՝ քափառ, մոլոր՝
 Քուրի՛կ, կարօսդ եմ փառում,—
 Ինչո՞ւ քողիւր մենակ, մոլոր,
 Դարիպ քողիւր ու սրտում...

Ասդունք ելան, մրնեն ելան,
 Քուրի՛կ, դեմքդ միսս եկաւ,
 Մուծը փաքքեց, սիրսս փաքքեց—
 Ասդունք ւրիս մեջ վառուան...

Վա՛յ, վա՛յ, քուրի՛կ, դարիպ ախպօր
 Կարօս ւրսով մի՛ քողնիր,
 Իմ օջախից, պսիկ սնից
 Խապար դրկե՛—մի՛ քողնիր.—

Սիրսս լիքն է, սիրսս կրակ,
 Կարօսն ինձի կրկառէ,—
 Տանս, օջախս, իմ վաքանիս
 Կարօսն ինձի կը վառէ...

1898 Երեւան.

I

Անձրեւն եկաւ,
 Հողը քոչեց,
 Բոյսը սրբեց—
 Ձա՛ն անձրեւ.
 Ամսն է փաքեւ,
 Յողը՝ կաք-կաք,
 Շողը՝ հաս-հաս
 Սիրսն է ցաքեւ—
 Ձա՛ն անձրեւ...
 Անձրեւն եկաւ
 Հողին՝ շաղ-շաղ,
 Սրիս՝ մաղ-մաղ—
 Լա՛ւ եղաւ.
 Հողի սիրսը,
 Մարդու սիրսը
 Հովցաւ, գովցաւ,
 Լա՛ւ եղաւ.
 Ժողովրդի,
 Գիւղականի
 Սիրսը բեռ ցաւ—
 Սրի ցաւը,
 Սրի դաւը
 Փարստուեցաւ,
 Լա՛ւ եղաւ—
 Ձա՛ն անձրեւ...

II

Էս ի՞նչ տեսակ
 Ամպեր ելան
 Խաղացին,
 Քամու դիմաց,
 Զօռի դիմաց
 Կռուեցին.
 Վերջը բամուռն
 Յաղթեցին,
 Աշխարհ ջրով
 Լցրեցին—
 Ջուր արին—
 Ձա՛ն ամպեր...

1899 Երևան.

Հայդուկն է ընկել սարերի յետեւ, դարերի յետեւ,
 Ի՞նչ գործի վրայ ե՛ք—հայդուկը լուռ-մուռ ընկել է
 անշունչ.

Է՛յ, սարի ռե՛րֆ—ձեր սուրբ մեռելին դե՛ք ձեր ուսին,
 Հայդուկին բերե՛ք ուսերիդ վրայ՝ մեր մեջ երեսայ,
 Արիւնք տեսնեն մեր որդիները—քոյ սրտներն եռա՛յ,
 Արեւը ծագի՛ր—ծաղիկը բացուի՛ հայդուկի վրայ...

1903 Ադեմ.



Դաւեսերն ու ձոր զուգեց գարուն,
 Բլբուլ կ'երգէ սար ու դար,
 Չորս դի՛ն կարմիր՝ քանց ալ-արուն,
 Չորս դի՛ն լալայ—լալայ-գար...

Է՛ս դաւեսեր ի՞նչ դաւես եմ,
 Է՛ս լալաներն ի՞նչ լալայ,
 Է՛ս կարմիրներն ի՞նչ կարմիր եմ,
 Է՛ս բլբուլը ի՞նչ կուլայ.—

Էս դաւեսերն եմ արունի դաւս,
 Էս սարերը՝ արունի,
 Անքիւ հոգիք ընկա՛ն, մեռա՛ն—
 Լալայ բացուել է հիմի...

Քափուր հոտն է բռնել չորս դին,
 Բլբուլ կ'երգէ սար ու դար—
 Մեռածների գարուն հոգին
 Ծաղկանց միջեւ վառելառ...

1906 Ադեմ.

ՀԵՐՈՍԻ ԵՐԳԸ

Անո՛ւշ փութիկ, իմ նազելիս,
 Քնի՛ր քո նուշ քնիդ մեջ—
 Վաղն առաւօտ դու կըզարթնիս
 Վարդ ու զարդը սրտիդ մեջ.

Թաւ մազերդ՝ շողուն, ցողուն՝
 Ոսկե սանրով կըսանրես,
 Հիւսիդ վրայ, ուսիդ վրայ
 Ակներ-ասղեր կըշարես...

Սարի քելիք, տուեց շողին
 Լուսնակ մարմանդ, ոսկեշաղ,
 Շողքը գցեց, ցոլքը գցեց
 Թարթիչներուդ մընշաղ...

Հոգուս հոգի՛ն—ձի եմ նստել,
 Սարը կ'երթամ շուտ ու սափ,
 Իմ սուրն, ասպար վար եմ առել՝
 Վաղո՛ւց սեւցած ժանգի տակ...

Ա՛խ, եղբայրդ ժանգոտած սուր
 Պիտի ներկե կաս-կարմիր,
 Նա կը բանայ մի արեւ-դուռ,
 Պիտի հագնի խաս-կարմիր...

Դու աղուծի՛կ, դու անո՛ւշիկ,
 Քնի՛ր,—ուռուն խռալեն,
 Լուսնակ շողայ նամբուս վրայ—
 Թռա՛ւ տափ ձիւս հրեղեն...

1906 Սդեփո.

ՍԻՐՈՅ՝ ՊԱՏԿԵՐ.

Արեւ տղեն, ջանով տղեն
 Դուրս փառեց իր նժույգ-ձին
 Ու քոչելով տկուր մեջքին՝
 Զուրք գնաց խաղալեն...

Մեր է մտնում արեւը վառ,
 Փեշը փռեց մընշաղ,
 Դեսը—կրակ է ոսկեշաղ,
 Սեւանում են բլուր, սար...

Իր նժույգի նման առույգ,
 Դեղեցիկ է ջան-տղեն,
 Նրա այտեր, նրա աչք, ունի
 Փայլփայլում են ինչպես գեղեցիկ.—

Վար է քոչում, բաց է քողնում
 Զրի վրայ ուժով ձին,
 Խմում է ձին ու փռնչում,
 Բաշը տալով հով-գովին...

Նա մեկ խմում, մեկ փռնչում,
 Մեկ նայում է դես ու դեն,
 Զանով տղա՛յ, աչքերդ շողուն
 Ինչո՞ւ հեռուն գնում են...

Նժույգիդ պես ծարա՞ւ ես դու,
 Բայց դու ինչո՞ւ չես խմում,
 Այլ նրա պես—վառ, անլեզու,
 Առաջ նայում ես —փռնչում...

Լեռի կողքին՝ ես գիտեմ, հա՛,
Գիշեր-աշերն է կանգնած,
Կուժը ուսին եկել է նա,
Բայց նա էլ է կախարդուած.

Տարած ջրի պես՝ պարզ, զուլալ--
Նրա աչքի բխրեղներ,
Իր կծի պես՝ խառն էն, խալ
Նրա այտերն ու ունքեր...

Եւ իր երկրի երկնի պես
Նրա հոգին բաց ու վառ,
Եւ իր երկրի բլբուլի պես
Նա երգում է սիրավառ...

Քո նժոյգը, ջանով սղալ,
Էլ տուն տանել չես ուզում,
Ծեղր առաւ լուսնակն ահա՛,
Մարդ չմնաց եդ տեղում...

II

«Ու՞ր է, չկաս, աղջիկ Մարօ՛»
Մայրն աղջկան է կանչում,
Գիշեր եղա՛ւ, դու ջրի մօտ
Ու՞ր մնացիր ես պահում...

«Մընձա՛ղ է. լուսնակն ելա՛ւ,
Էլ կլլիկի՞ն՝ ջուր բերեն,
Չե՞ որ՝ ջրից, նրմից հրեւներ
Էս ժամանակ դուրս կ'ելնեն...»

Սիրուն Մարօն եդ չի լսում,
Նա կանգնել է լեռի հով,
Իսկ էն հեռուից ջանով սղեն
Նրան կանչում է ւրսով...

Պուլաի 1889.

ՄԱՄԻԱ ՕՐՀՆԵՆԲԸ

Նուիրում եմ Նագեղի մամիա քաղցր յիշատակին

Միսս է զալիս օտարութեան մեջ անգամ
Մամիա պատմած հեքիաթներն իմ մանկութեան,
Երբ ցուրտ ձմեռն գիշերները բոլորած
Նրա շուրջը՝ լսում էինք վափազած:

Ես յիշում եմ, ի՜նչպէս սարսափում էի,
Սովոր կեանքը իմ առջեւից փախչում էր,
Եւ այդ պատմած հեքիաթները իմ մամի
Վառում էին վախով անուժ իմ մեներ:

Պառկում էի ես քնելու. շատ անգամ
Հեքիաթների հրեւներն իմ առջեւից
Չէին գնում... սիրս խփո՛ւմ էր անկամ...
Ես վերմակս քաշում էի իմ գլխին:

Ահա՛ անցան այն օրերը եւ հիմա
Անհոգ ժպտով նայում եմ իմ անցեալին,
Պառաւ մամիա հեքիաթները ձմեռուայ՝
Քաղցր յիշատակ ւրտումս քողած՝ գնացին:

Ասացի ինձ՝ երբամ ասեմ. «բարեւ, մամի,
Չեմ մոռացել հեքիաթներդ վաղեմի,
Ահա՛ եկայ քեզ պատմելու, դու լսե՛,
Անցած օրը մարդու համար միշտ քաղցր է»:

Ծերութիւնը մամիա այնպե՛ս էր ընկնել,
Ինձ տեսնելիս ուրախացաւ ւրախի,
Հեկեկալով ինձ սկսեց աղօթել,
Վերջին օրհնեմն այս էր պառաւ իմ մամի.

«Բարով եկա՛ր, անուշիկ բոռ, անուշ որդիս,
Ա՛յն, ինչ կը լինի դարիս սեղից ազատուիս,
Ուր որ երբաս՝ յաջողութիւնը քեզ հետ,
Ազիզ բոռ ջա՛ն, կանաչ բացուի քո համբէդ:

«Գաբրիել հրեշտակ քեզ պահապան լուսաշաղ,
Առողջ եղի՛ր, դարիս բոռս, քեզ մասալ,
«Նօքն-վիրաց» աչիւ վրէժ միշտ լինի,
Մրհիդ մուրազն ուզածիդ պէս կատարուի:

«Թե՛ չոր քարին երբաս՝ քոյ պարզ ջուր վազե,
Թե՛ հող բռնես, որդի՛ս, քոյ ոսկի դառնայ,
Փակ դուռն երբաս—դուռը առջեւդ բացուի,
Նօքն որդոցով սեղան նստիս անխնայ:

«Երկար արեւ, ներմակ մօրուք դու լինիս,
Աստուածային անհասնելի հացն ուտես,
Արեւդ կանա՛չ, հե՛ջ չբաշես «ախ ու վախ»,
Շէն օջախով դու ծառ լինիս, նիւղեք տաս»:

Ես լսեցի պառաւ մամիս խօսքեր,
Նրա դողդոջ ձայնը քաղցր էր ու մեղմիկ,
Ես գնացի. նիւանդ մամիս օրերը
Դժուար էին,—ոսկի ժամե՛ր, ո՞ւր գնացիք:

Եւ երդում եմ՝ կեանքիս մեջ միշտ գուրգուրել
Նրազանքը նախնիքներիս, օջիւ սէր,
Եւ երբ դժուար, դառն օրեր եմ տեսնում՝
Մամիս վերջին գրոտ խօսքերն եմ յիշում:

1886 Քաղու.

ԳԻՒՂԱՅՈՒ ԿԵԱՆՔԸ

I

Սիրեցի՛ կեանքդ, զիւղացի՛ եղբայր,
Եւ հեռու կեանքում իմ պանդխտութեան՝
Կարօտով, սիրով ես երգել եմ այն:

Ես քո գարունը անչափ սիրեցի,
Նրբ նա բացում էր մանկական ժպտով,
Եւ բնութիւնը զուգում ծաղկունքով...

Նրբ որ լեռներդ զարդարում էին,
Կեանք էր ներշնչում նոր զարթոյն երկիր,
Նրբ դու գութանով դաշտ գնում էիր:

Բըռով ցորե՛նը—առո՛յգ հասիկներ,
Պա՛րզ առաւօտեան սփռում՝ ու սփռում՝,
Եւ Սեղծողին դու աղօթք անում...

Վերից արտուքը նուողում էր հեզ,
Լեռնային կրճից փախ տուած վտակ—
Սանում, խոխոջում էր փրփրադեզ.

Արեւը իրան արծաթե շողեր
Պայծառ երկնքից սփռում էր գետին—
Յօղազարդ բոյսերը շողշողում էին.

Ամբողջ բնութիւնը կեանք էր խոստանում
Յանաճ հասիկիդ, ջանքիդ քաղցրաբեր,
Եւ քո մանուկը անհոգ երգում էր...

II

